Արարատեան ընդ բարձրաբերձ լերամբ մասիսաւ թագաւոր արար Տէր 'ի վերայ ամենայն երկրի և 'ի վերայ ամենայն լերանց, զի որպէս Դրախտն եդեմայ նախամայր եղև բնակութեան նախահօրն մերոյ Ադամայ, այսպէս արարատն մասիսեաւ երկրորդ մայր եղև բնակութիւն երկրորդ հօրն մերոյ Նոյի։

Ուրեմն մի՛ լիցի առանց պատճառ զի Տէր և Արարիչն ամենայն բարձրաբերձ լերանց հաճեցաւ իջուցանել միայնակ արդարն և սիրելի այր նախահայր մեր Նոյ 'ի վերայ լերանն մասիսու և զօրհնութիւն իւր 'ի վերայ տանն Նախիջևանու և երկրին Արարատու։

Մի՛ լիցի առանց պատճառ առաջին արիութիւնն և ընդ դէմ անձնահաճոյ ինքնակալութեան քաջութիւնն որում սկսեաց Նախնին մեր քաջագանգուր և հաստաբազուկ հզօրն զօրութեամբ Հայկ, որ 'ի բարձրութենէ գոռոզութեան, և 'ի գարշելի հպարտութենէ խոնարհեցոյց և երկիր թաւալեցոյց հպարտացեալն բէլ 'ի յերեսս յերկրին յաշխարհին մերոց տուրուբերան 'ի ոտն սիմ լեռան անուանեալն Հայոց ձոր 'ի տեղի որում անուանեցաւ գերեզման։

Մի՛ լիցի առանց պատճառ զի առանց քարոզ բանից վարդապետաց, և առանց մարգարէից ասածութեանց, և առանց տեսանելոյ հրաշից, և